1. Բաժանորդը, միանալով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդ և.
   - Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար,
   - Ստանում է PSG1282N Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) անվճար օգտագործման իրավունք (բաժանորդը կարող է հրաժարվել Սարքի անվճար օգտագործման իրավունքից):
2. Սարքի անվճար օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից օգտվելու պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև շարունակվում են Ծառայությունների մատուցման հարաբերությունները, և Սարքն անհրաժեշտ է Բաժանորդի կողմից Ծառայությունները ստանալու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
3. Ինտերնետի այլ սակագնային փաթեթների (բացառությամբ Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի Բաժանորդների) Բաժանորդները նույնպես կարող են անցում կատարել Անլիմ ժամկետային սակագնային փաթեթին և Ծառայություններից օգտվել սույն պայմաններով:
4. Եթե Բաժանորդը ցանկանում է դադարեցնել Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրությունը կհամարվի դադարեցված ընթացիկ պարտքը և այն գումարը, որը Բաժանորդին զիջվել է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի պայմանների շրջանակներում /կետ 1/ ամբողջությամբ վճարելու և Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրության դադարեցման մասին դիմում ներկայացնելու պահից:
5. Եթե Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին միանալիս Բաժանորդն իր ցանկությամբ չի օգտվում Սարքի անվճար օգտագործման իրավունքից, ապա Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
6. Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի Բաժանորդները փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ առաջին 4 օրացուցային ամիսների ընթացքում հնարավորություն ունեն փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով միայն ավելի մեծ արժեքով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի:

   Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի ակտիվացման պահից սկսած 4-րդ օրացուցային ամսվա ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով թե՛ ավելի մեծ, թե՛ ավելի փոքր արժեքով Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի:

7. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:
8. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածի տևողությամբ:

   Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդը օգտվել է Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթից բաժանորդագրության օրվանից սկսած տասներկու օրացուցային ամիս:
9. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:
10. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: